



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13902

891.99

U 76



2003

ՍՈՒՐԲԵ ՆԵՐՍԷՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐԸ.



Փարիզ. Տպագրութիւն Արմ. Ի Տպար. Է. Մէյերի, փող. Ապէյի, թիւ 3.
Typographie arménienne Ernest Meyer, 3, rue de l'Abbaye, à Paris.

Երևանի ԲՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ
և ԵՍ Հանրապետության Ազգային
հայտնի: 1882, Օգոստոս:

ՍՈՒՐԲԵՆ ՆԵՐՍԷՍ

891.99

576

2 *պ*

ԿԱՄ

Հայաստանի Բարերարը.


ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅՕԻՆԵԱՅ

ՋՄԻՒՌՆԱՅԻ Պ. ՍԱՐԳԻՍ Տ. ՄԱՐԳԱՐ

ՊԱՆԱՆԴԵՅԻ

Միրզա



1001
3946

Առաստձեռնությամբ

ԱԶՆՈՒՍՓԱՅԻ, ԵՒ ՊԱՅՍՁԱՅ ՆԵՐՍԷՍ - ՊԵՊԻ

ՏԱՏԵԱՆ.

ՓԱՐԻԶ

Ի ԳՐԱՆՈՑԻ ՃԱՆԻԿԱՅ ԱՐԱՄԵԱՆ.

1858



UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO



ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Երբ Եւրոպական ազգաց հետ բաղդաստու ըլլանք մեր ազգը, պիտի տեսնենք որ շատ բաներու հետ մեկտեղ նոյնպէս բասերգութեան մեջ ալ շատ քիչ՝ չըսեմ ամենեւին՝ յառաջացած է, եւ անոր օգուտը շատերուն անծանօթ:

Ազգասեր սրտի մը ներելի է անշուշտ ինչ տեսն իր ազգին մեջ ալ ընտանեցընելու փափարով՝ բասերգութեան գովելի ու օգտակար յատկութիւնները համառօտիւ նկարագրելու ըլլայ:

Թասերգութիւնը՝ երբ չէմ սխալիր, ազգի մը յառաջադիմութեան գլխաւոր մասունքներէն մեկն է. արդ՝ փորձով հաւաստենք ըսածնիս: Առաջին՝ որ բասրոնի մեջ կենդանի նկարագրութիւնը տեսնելով ու լը-

սելով՝ անոր բարի հանգամանքները իրեն օրինակ կառնու հետեւաբար իր սրտին մեջն ալ կայծ մը կ'արծարծի նոյն դիւցազանց վարուց ու գործոց հետեւելու : Նոյնպէս չարագործ անձանց պարսաւելի գործքերը ու իրենց վախճաննին կենդանի աջօք սեսնելով՝ նոյն կերպ չարութեան չը հետեւելու փոյթ կուներնայ :


Բ. Խօսակցութեան կերպը կը սովորի ու զանազան խօսակցութեանց մեջ իր յեզուն կը բացուի :


Գ. Իմացականութիւնը կ'ընդարձակի պատմութեանց տեղեակ կ'ըլլայ . վերջապէս իր քսակին ,անձին ու պատշտոյն վնասակար խաղերէնու գործքերէ կ'արգիլուի ու բոյորովին կը մոռնայ : Ուրեմն ասանկ մէկ ազգօգուտ գործ մը ինչո՞ւ համար մեր ազգին մեջ ալ չը յառաջանայ . . . :

Արդ՝ այս ողբերգութիւնը շինելու եւ հրահարակելու համար . առաջին՝ ուսումնական ու յեզուագէտ Ներսէս Պէկ Տասեան ազգասէր Պայագասին բանիւ ու սրտեամբ

քաջալերութիւնը . եկրորդ՝ Հայկազն Երիսա-
սարդաց ողբերգութեան ճաշակը իմացնե-
լով՝ անոնց մէկ փոքրիկ ծառայութիւն մը
ընելու փափաքս . ասանկ գործի մը ձեռ-
նամուխ ըլլալու անբաւականութիւնս ինձ
մտոցընէլ տուին :

Այս եւս կը խոստանամ՝ որ եթէ այս փոք-
րիկ աշխատութիւնս ազգասէր արեւե ւ-
ռանց անոր մեջի թերութեանց նայելու ըն-
դունուի , պիտի քաջալերուիմ ուրիշ մէկ քա-
նի ողբերգութիւններ այ հրատարակելու աշ-
խատութիւնս կատարելապէս վարձատրուած
համարելով :






ԱՆՁԻՆՔ.

- ✓ ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ:
- ✓ ԹԷՈՂՈՍ ԿԱՅՍՐ ՅՈՒՆԱՅ:
- ✓ ՊԱՊ, ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ:
- ✓ ՏԱՐԵՆՏԻՈՍ, Զօրավար Յունաց:
- ԽԱԴ, Տեղակալ սրբոյն Ներսիսի:
- ✓ ՍՄԲԱՏ, ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Ասպետ և գորապետ
Հայոց:
- ✓ ՄՈՒՇԵՂ, ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Զօրավար Հայոց:
- ✓ ՄԵՐՈՒԺԱՆ, Հայրենատեաց ոմն:
- ✓ ԳԱԻԱՆ, Ծառայ սրբոյն Ներսիսի:
- ✓ ՎԱՂԱՐՇ, Պաշտօնակալ Պապայ:
- ✓ ԿՈՍԳԱՆԳ, Պաշտօնակալ Տարեւտիոսի:
- ԳՐՕՇԱԿԱԿԻՐՆ Հայոց:
- Պաշտօնակալ ոմն Պարսիկ:
- Բանտապան մի:
- Մանկյաւիկ մի:
- Զինուորներ, պահապաններ, և այլն:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

չորս արարուածներու բաժնուած .
ուսաջին եւ երկրորդ արարուածները կ. պօլսոյ մեջ
կ'իյնան,
միւսները հայաստանի մեջ:



ՀԱՅՏԵՆԻ

1 ՈՒՐԱՆՈՒՄ

Այն՝ թոյն կար բածակի տէջ զոր ինձ անց ասի սիրով մտնոցիւր... Անգութ սիրս... Կրկնեմ թեզի բաց կրցաւ իմ Հարստսսմի վրայ

ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ

ԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐԸ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ.

Կայսեր պալատին մեջ :

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ ԵՒ ԳԱԻԱՆ

Սուրբն Ներսես սենեկի մեջ արօթի մը վրայ կը ննջէ :
Գաւան կը մտնէ ձեռքը նամակ մը բռնած ու դէպ ի Սուրբ Հայրապետին մօտենալով կ'ըսէ .

ԳԱԻԱՆ.

Տէր իմ, Հայաստանէն նամակ ունիք, (պատասխան չ'առնէք) :

Ձարմանալի բան . այս ժամանակս երբեք քնացած չէր . պէտքեմ գայն արբնցնէյ . բայց չէ, գուցէ հանգստութեանը արգէյք կըլլամ :

Ո՛վ բուն մարդիկ գրէզ իրենց հանգիստը կանուանեն, բայց ես կըսեմ որ կը սխալին . որովհետեւ քու կերպարանքդ այ սոսկալի է . դո՛ւն այ գրէքէ մանւան չափ ազդեցութիւն կընես մարդկային սրտի մը :

Այս պատկառելի դիմաց վրայի կնճիռը ինչի՞ նըշան է . ուսկի՞ց կը պատճառիկոր այս կերպարանաց

վրայի տրտմութեան գիծերը, երբ ոչ երեւակայութենէ, եւ այս երեւակայութիւնը ինչ ժամանակ մարդուս վրայ կը բռնանայ, գիշերը. ինչ ատեն հարկաւորութիւնը բնութեան կը հնազանդի :

Ուրեմն ո՞վ է այն մահկանացուն որ քունը հանգիստ կանուանէ. բող գայ տեսնէ, անո՞ քունէն պատճառուած հանգստութիւնը, այնպիսի հանգստութիւն մը՝ որ իմ ուրբ Հայրապետս տրտմութեան ու վարանաց ովկիանոսներու մէջ կը քափառեցնէ. այնպիսի հանգստութիւն մը, ո՞ն տեսէք, որ Տիրոջս ծնօտներէն արտասուաց կաթիլ կը հոսեցնէ: Այ ջէմ կրնար համբերել. այնչափ անգութ ջէմ ըլլար որ բողում իմ Տերս երեւակայութեան ձիրաններուն տակ աւելի եւս նեղուի. արթնցնեմ գայն բայց... Ինչո՞ւ ետ կը կենամ. արթնցնեմ ու վախճան մը տամ իրեն այս տառապեցուցիչ երազներուն ջէ, ես ջէմ արթնցներ, անաւասիկ ինքը կը շարժի. այն կարթնակոր :

(Սուրբն Ներսէս կ'արթննայ:)

Ս. ՆԵՐՍԷՍ.

Տղայ, Գնւան :

ԳԱԻԱՆ.

Տէր իմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ո՞ւր եիր :

ԳԱԻԱՆ.

Մէկ ժամ է որ Ձեր շարժումները կը դիտեմ Տէր իմ, բայց չը համարձակեցայ արթնցնելու :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Գնան, հայրենեացս վրայ ջարագուշակ երագներ տեսայ : Յիրաւի, երագներու ականջ ջեմ կախեր, բայց այս կերպ երագներ շատ անգամ ստուգուած են : Ո՛ր էր որ Հայաստանէն տեղեկութիւն մը առնէի :

ԳՍԻԱՆ.

Տէր իմ Հայաստանէն նամակ ունիք . ահաւասիկ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ապրիլ տղայ, որ ինձ ուրախութեան պատճառներ կը հաղորդես : Գիտես որ արտրէն դառնալես ի վեր ինչպէս կը փափաքիմ հայրենեացըս վրայ տեղեկութիւն ունենայ... (բանալու աշխատելով), Ն՞րբ եկաւ :

ԳՍԻԱՆ.

Տէր իմ, ձեռքս անցնիլը հագիւ քե քանի մը բոպէ կայ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Բարի . ո՞վ տուաւ քեզի :

ԳՍԻԱՆ.

Կայսրը իր ձեռքով :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ուրիշ բան ըսան :

ԳՍԻԱՆ.

Ո՛չ, բայց իր կերպարանաց վրայ տրտմութիւն մը

կը տիրէր. նամակը ինծի յանձնած ժամանակը է.
նչ անգամ մը ըսաւ, որ այս քու Տիրոջդ կամ Սըր
բագանին տուր. բայց միայն դեմքը տխուր կերպով
մը շարժելով ինծի հասկըցուց :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Գնաւան. արդեօք գինքը բարկացնելու առիթ մը
տուած էս :

ԳԱԻԱՆ.

Չէ՛ Տէր իմ, ամենեւին :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Մտածէ՛ անգամ մը, գուցէ...

ԳԱԻԱՆ.

Աղէկ կը յիշեմ որ չէ՛, Տէր իմ. մանաւանդ գիտեք
թէ անոր սիրելի էմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Միտքս ուրիշ կասկած մը կ'իյնակոր :

ԳԱԻԱՆ.

Ի՞նչպէս :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Հայաստանէն իրեն ուղղուած ուրիշ նամակ
կամ :

ԳԱԻԱՆ.

Այո, ձեռքին մեջ ուրիշ նամակ մ'ալ տեսայ
բացուած :


Ս. ՆԵՐՍԷՍ.

Ուրեմն ճիշդ է կասկածս, իրեն տրտմութեան պատճառը այս նամակն էղած պիտի ըլլայ, այս նամակը որ վախճան գիս ալ պիտի տրտմեցընէ... Տէր Աստուած. ինչ պիտի կարդամ արդեօք այս նամակին մէջ (*խսկոյն կը բանայ*): Ա՛հ... սիրտս վրայ չ'երթար կարգալու (*կ'սկսի կարգալ. յանկարծ կը շփոթի*): Ի՞նչ աղիտալի լուրեր (*զարձեալ կ'սկսի կարգալ աչքերը սրբելով*). ափսճս. (*քիչ ժը վերջը կը զարբի*). ճհ, ալ չեմ կրնար կարգալ. ալ չեմ կրնար ինքզինքս բռնել ու չ'ողբալ հայրենեացս աղիողորմ թշուառութեանց վրայ: Իմ արտրանացս մէջ յիրաւի շատ դժբաղդութեանց պատահեցայ, ալեկոծութենէ նեղուեցայ, մահուան կէտը հասայ. օտար, անծանօթ ու վայրենի գազաններով լեցուն երկրի մը մէջ բափառեցայ. անօթի, ծարաւ, անբուռն ու անօգնական մնացի. բայց ասոնց ամենն ալ գիս այնչափ չը վշտացուցին, որչափ որ Հայաստանի հիմակուան ողբալի վիճակը:

Մնկան վրայ գալով.

Ո՛վ բազմագուրք Տէր, քեզմէ գատ ուրիշ ապաւեն չ'ունիմ. դն. ես իմ յոյսս եւ ապաւինութիւնս. ընդունէ այս իմ խոնարհ աղերսս. ընդունէ. ո՛վ ամենողորմ Տէր. մի՛ տար որ այս իմ ալեւոր ծերութեանս մնացած վաղանցուկ օրերը, հայրենեացս դժբաղդութիւնները լսելով ու տեսնելով վերջանայ: Մի՛ տար որ քու ամենասուրբ արեամբդ գնած այս

1007
3946
9466



քու ժողովուրդդ՝ անհասարկ կորստեան անդունդներուն մէջ գահավիժի :

Դասիք առաջին մարգարէն՝ ինչ աստէն յուսահատած առ քեզ դիմեց . դուն, իմ մարդասէր Աստուած . անոր աղաչանաց լսեցիր . ու կասեցուցիր մահուան արագաթուիչ ընթացքը . Յովնան մարգարէն՝ ինչ աստէն քեզմէ տարադիմ կ'ուզէր փախչիլ, ծովու անդունդներուն մէջէն քեզի ապաւինեցաւ դարմեայ . եւ դուն, իմ անյիշաբար Տէր, տեսար անոր նեղութիւնը քու ամենատես աջօրդ եւ ազատեցիր զայն, երէք օր ծովու ամենի վիշապին փորը փակուեցէն վերջը : Նոյն անփոխարինելի շնորհքները այս քու անարժան ծառայիդ ալ պարգեւեցիր . պարգեւէ եւ այժմ Հայաստան հոգեվարք աշխարհին վրայ :

Ո՛վ դժբաղդ հայրենիքս . այս կէրպ պիտի լսէի ուրեմն քու վրայօրդ . այս օրինակ հայրենատեաց գաւակներ պիտի ունենայիր, որ զքեզ կործանելու եւ հիմնայատակ ընելու կը շանան : Սիրտս կ'ողբայ որ առաքիներս ընդ նախանձու ակռաներուն տակ կը ճնշի . Հայաստան աշխարհ, կորսնցուցիր դուն ալ քու եռանդուն ոգիդ, ափսոս.....

(Կը թակահայ վար կ'իյնայ : Գաւան որ քիչ մը հեռու կայնած սուրբ Հայրապետին շարժմունքները տեսնելով՝ ձեռքը ձեռտին վրայ դրած արտասուք կը թափէր . Սրբոյն իյնալուն վրայ շուարման ձայն մը կը հանէ ու անոր օգնելու կը մօտենայ :)

ԳԱԻԱՆ.

Հայր. (Յեւէն բաշեթով) ; Հայր պատուական,
(Սուրբը չ'շարժիր) : Ա՛հ. (ձեռքը իրեն մոզերուն մէջ

խօթելով) . կերպարանքդ ինծի վնիս կը պատճառե
կոր (կը շփոթի) . Մեկ ժամ յառաջ կերպարանացդ
վրայ բոլորովին ուրախութիւն կը տիրեր . մեկ
ժամ յառաջ հանգիստ ու խաղաղ այս սենեկիս մեջ
կ'առանձնանայիր . իսկ հիմն . հիմն , նն . ինչ
ըսեմ . մահուան դեղնութիւն արդեօք . բայց չէ .
չեմ կարծեր . մահը այսչափ շուտ իր ազդեցու-
թիւնը չ'ըներ , իր սենեակը տանիմ որ հանգչի ,
եւ բժիշկը կանչեմ գայն դարմանելու :

(Գրկելով դուրս կը հանե):

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ՏԱՐԵՆՏԻՈՍ ԵՒ ՄԱՆԿԼԱԻԿ

Մանկաւիկը կը մտնէ ետեւէն Տարենտիոս զօրավարը .

ՏԱՐԵՆՏԻՈՍ .

Ո՞ր կերթաս :

ՄԱՆԿԼԱԻԿ .

Տէր իմ , Կայսեր հրամանը կատարելու :

ՏԱՐԵՆՏԻՈՍ .

Ի՞նչ հրաման ունիս Կայսրեն :

ՄԱՆԿԼԱԻԿ .

Պատուիրել որ մեկը չ'մտնէ իր սենեակը :

ՏԱՐԵՆՏԻՈՍ .

Ի՞նչ պատճառաւ :

ՄԱՆԿԼԱԻԿ.

Տէր իմ, պատճառը չեմ գիտեր. միայն թէ ինծի
ատանկ պատուիրեց, և ստիպուած եմ անոր հրա-
մանը կատարելու :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Ուրիշ մէկը կ'սնջ բովը :

ՄԱՆԿԼԱԻԿ.

Առանձին է Տէր իմ. և առանձին մնալ կ'ուզե-
ծամանակ մը :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Անշուշտ պատճառ մը ունի առանձին մնալու,
բայց դուն' կ'սնջ չես գիտեր պատճառը, և կամ
չ'գիտնալ ձեռացընելու պատուիրուած ես :

ՄԱՆԿԼԱԻԿ.

Ամենեւին Տէր իմ. միայն այսչափ տեղեկութիւն
կրնամ տալ ձեր հրամանոցը. որ այսօրուան կրած
կերպարանքը տխուր կ'երեւայ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Ի՞նչ կ'ըսես. արդեօք ինչ առիթ ունի տրտմելու :

ՄԱՆԿԼԱԻԿ.

Ատիկայ ինծի յայտնի չէ. բայց ներեցէք ինծի
Տէր իմ. եթէ կայսեր հրամանը ի գործ դնելու
կ'աճապարեմ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Շատ բարի, մանաւանդ թէ կը գովեմ այդ կերպ վարմունքդ :

(Մանկաւիկը կը մեկնի.)

Ասիկայ ինծի զարմանք կը պատճառէ : Տերութիւնը բոլորովին խաղաղութեան մէջ կը գտնուի, նախարարաց եւ իշխանաց մէջ խռովութիւն մը չ'կայ, պալատին մէջ անդորրութիւնը կը տիրէ. ուրեմն ինչ պատճառ կրնայ ունենայ տրտմելու : Պալատին մէջ անշունչտ մէկը կը գտնուի որ Կայսեր տրտմութեան պատճառը գիտնայ, ուրեմն անպարեմ այս բանս տեղեկանալու :

(Կը մեկնի :)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Գաւան բարկութեամբ մը կը մտնէ.

ԳՍԻՍՆ.

Ո՞ր է այն նամակը, այն գուժաբեր նամակը, որ իմ Տիրոջս սիրտը այս աստիճան վշտացընելով՝ գայն անշունչ ու անշարժ կերպիւ թալկացուց : Ո՞ր է... Ահնա :

(Նամակը գտնելով կը կարգայ.)

« Սրբազնաստուրբ Հայր ,

« Հայաստանի խաղաղութեան եւ սիրոյ արեւը մարեցնա... գացին, անհետացան այն երջանիկ օրերը, եւ անոնց յաջորդեցին անմիաբանութիւն, արիւն, սուր, աւերումն եւ կոտորած..... Սրբազան Հայր . Հայաստանն այլ մարդկային սեռի բնա-

կարան չէ. այլ արինարբու գագանաց. Հայաստան՝ շինուածոց Եւ պալատներու կայարան չէ այլ. հապա տրտմութեան, ողբոց Եւ հառաչանաց տխուր աւերակներ : Հայաստանի վրայ իշխողը մարդ չէ, բանական սիրտ չ'ունի. հապա անյագ արինարբու ճիւնդ մը, հրէշ մը : Իմ բոլոր խրատներս ոտքի տակ առին. բոլոր ազդարարութիւններս արհամարհեցին, Եւ որպէս զի իրենց անիրաւութիւնները կշտամբող՝ Եւ անգրութիւնները յանդիմանող մէկը չ'գտնուի. Արշակայ հրամանաւանգութ ձեռքերէ բռնուեցայ. Եւ պիտի քարկոծուի՝ Երէ ազգականներս վրայ հասնելով զիս չ'ազատեին անոնցմէ :

« Չափազանցութիւն մի՛ կարծեր ասոնք, պատուական Հայր, պարագայիւրը չեմ պատմեր, որպէս զի Ձեր վեհանձն սիրտը չ'վշտանայ : Չեմ յիշեր անօրէն ու հայրենատեաց Մերութանայ սոսկալի անգրութիւնները, սպանութիւնները, Հայաստանի բնակիչը Պարսկաստան հալածելը : Չեմ յիշեր Եկեղեցիները ու վանքերը քանդելը, նոր ատրուշաններ հաստատելը, Եկեղեցական արարողութեանց Յունարէն գրքերը բոլորովին այրելը : Չեմ յիշեր անոր գործած սարսափելի ոճիրները, մատնութիւնները. իրեն խիստ սպառնալիքը՝ Յունարէն լեզուով չ'կարդալու, չ'գրելու Եւ չ'խօսելու : Այս ամենը չեմ յիշեր որպէս զի Ձեր տրտմութիւնը չ'կրկնապատկուի :

« Պարսիկք ամեն տեղաց գունդագունդ կը բա-

փին Հայաստանի մէջ : Նախարարներուն ամեն
մէկը իր անձը կը հոգայ, սյ Հայաստանի մէջ ազ-
գասեր ոգի մը չ'գտնուիր : Արշակ անձնատուր
եղաւ Պարսից, ծանր շղթաներով բեռնաւորուած
քանի մը օրէն Անյուշ բերդը բանտարկուեցաւ,
եւ հոն ճանչնալով որ ազգին բոյոր խեղճութեանց
պատճառը ինքը եղած է. իմանալով որ իր ան-
խոհեմ ու անկարգ վարմունքը զՀայաստան այս
աստիճան թշուառութեանց մէջ ձգեց. յուսահա-
տութենէ զարկան ինքզինքը բանտին մէջ. ու իր
ձեռքովը վերջացուց իր գեղիս կեանքը :

« Մէկը չ'կայ Հայաստանի մէջ որ անոր մա-
հուանը վրայ ողբայ, անոր մահը Հայաստանի
աւելի աղէկ վիճակ մը չը պատճառեց, այլ աւելի
գեղ : Կարծես թէ Պարսիկը աւելի ոյժ առին, եւ
սկսան սյ աւելի սաստկութեամբ..... :

« Ներէ ինձ ո՛ սրբազան Հայր. սյ չեմ կրնար
շարունակել. սիրտս կը ճմլի հայրենեացս այս ամե-
նաթշուառ վիճակին վրայ : Ժամանակ է որ Ձեր
հագուազիւտ հանճարոյն շտեմարանը բանար,
ժամանակ է որ Ձեր տաղանդաշատ բնաւորու-
թեամբ այս աղետներուն դարման մը տանիք :
Հայաստան հոգեվնրք է. մեռնելն կը մօտենայ,
զՁեզ իրեն օգնութեան կը կանչէ. աւերակները եւ
մեջի անապատան քաղաքացիք Ձեր օգնութիւնը
կը խնդրեն... :

« Ամենախոնարհ Տեղակալ Ձեր

ՊԱՌ ՍԱՐԿԱՒԱԳ : »

Քարէ սիրտ մը կ'ուզէ որ այս նամակը կարգայ
ու ջ'հեծէ. Արշակ, հայրենատենց թագաւոր, ո՞ր
էր որ այդ քու գեղիս կեանքդ քիչ մը յառաջ վեր-
ջացնէիր, հիմա Հայաստան գուցէ այս օրինակ
դժբաղդութիւններ չէր կրէր : Ո՞ր էր որ Հայաս-
տան քեզի պէս բռնաւորի մը երեսը բնւն. ջ'տես-
ներ : Դուն մեռար. բայց քեզմէ պատճառած անի-
րաւութիւնները, թշուառութիւնները, զեղխութիւն-
ները կենդանի թողուցիր : Ներկայացիր ուրեմն
հիմա այն անարկոս թագաւորին առջեւ, ներ-
կայացիր սարսափմամբ, ու գործած ոճիրներուդ,
պատճառած խեղճութիւններուդ ու քու անճնա-
սպանութեանդ ցուցակը, համարը եւ հաշիւը
տոնր :

Երբնմ Սրբազանը գտնեմ. նայիմ ինչ վիճակի
մեջ կը գտնուի : Իրաւունք ունի եղեր որ այս սս-
տիճան սիրտը ցաւելով քալկացաւ. եւ ո՞ր ազգասեր
սիրտ այս աղետները լսելով չը ճմլի... Խեղճ Հայաս-
տան. բաղդակորնյս տերութիւն. ցաւայի աշխարհ.
որ երբեմն անարկոս, պերճ եւ բարեկարգ թա-
գաւորութիւն : Կ'ողբնմ ես այ քեզի հետ քու
թշուառութեանդ վրայ. կ'ողբնմ որ քու գեղեցիկ
շէնքերովդ աներակներու կոյտ դարձած ես. ամի-
սնս... ամիսնս...

(Կը մեկնի.)

(Վարագոյլը կը գոցուի.)

ԱՐՄԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ .

Կայսեր պալատին մեջ սենեակ մը :

ՏԵՍՍՐԱՆ ԱՌԱՋԻՆ .

ԿԱՅՍԻՐ , Ս . ՆԵՐՍԷՍ , ՄԱՆԿԼԱԻԿ ,
ՏԱՐԵՆՏԻՈՍ ԵՒ ՊԱՊ .

Կայսրը Հայաստանէն եկած նամակը ճեռքը բռնած :

ԿԱՅՍԻՐ .

Յիրաւի սիրտս շատ ցաւեցաւ . Հայաստանի
թշուառ կացութեանը վրայ , եւ կրնամ ըսել թէ իմ
տրտմութիւնս այ Չերիկին կը հաւասարի :

Ս . ՆԵՐՍԷՍ .

Ազնուական ոգոյ հաւաստիքներ են ատոնք ,
ն Մեծափառ Տէր : Չեմ կրնար հայրենեացս մեջ
գտնուող անճնատէր մարդկան թիւը պակսեցընել ,
քանի որ ըրած գործքերնին յայտնի կը վկայեն :
Ափսնս , որ Հայաստան այսպիսի հայրենատեաց
անճերու ջարութեանը գոհ կ'ըլլակոր , ծերու-
քեանս մեջ այս ամենէն մեծ վիշտը պիտի ըլլայ
եղեր , որ իբրեւ անյագ ցեց իմ կեանքս մաշեցնէ :
Ներէ արտասուացս , ն խաղաղատէր Իշխանդ ,
որոնք հայրենատէր ազգերէ կը բղխին :

(Թաշկինակով ազգերը կը գոցէ ու կուլայ .)

ԿԱՅՍՐ.

Հանդարտեցէք, ո՛ր սրբազան Հայր, տրտմութեան եւ վշտերու մեջ չ'յուսահանտիրը եւ Ձեզմէ պետք էմ սովրիլ, տեղի տուէք այդ տրտմութեան, որ թեպէտ եւ արդարացի է, բայց այեւորեալ հասակնուդ վնասակար : Քաջայերուեցէք . գրասիրտ ոգիներ տակաւին կը գտնուին : Հանդարտեցէք կ'ըսեմ . տրտմութեան ախտը փոխադրական է որուն ազդեցութիւնը եւ այ կ'զգամ : Շատ անգամ Ձեր ազդու խօսքերը լսեր էմ, որոնք տրտմութեան ու ցաւոց համբերութեամբ տանելու համար ազդու քաջալերներ էին :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Երջանիկ պիտի համարեի ինքզինքս . եթէ արտաբանաց ժամանակ իմ կեանքս վերջացնէի, հիմա հայրենեացս դժբաղդութիւնները չ'էի լսեր :

ԿԱՅՍՐ.

Կը նայիմ որ տրտմութեանդ սահմանը ընդարձակուէր է : Այդչափ անօգնուտ կը համարիք Ձեր կեանքը, տակաւին պետք էք ապրիլ . Աստուած Ձեր կեանքը պետի երկարցնէ, որպէս զի Հայաստան իրեն պաշտպանը ու բարերարը կորսնցնելով աւելի դառն դժբաղդութեանց մեջ չ'իյնայ : Անկեղծաբար կը խօսիմ . Հայր սրբազան, երջանիկ պիտի ըլլայի ստուգիւ . եթէ Ձեր երկրորդը իմ տերութեաննս մեջ ել գտնուէր :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ձեր Վեհափառութեան անգուգական սիրտն է, որ կ'ստիպէ գՁեզ այս կերպիւ նուաստիս հետ վարելու: Բայց արդ՛ խօսեցէք ինձի, ինչպէս չը տրտմիմ որ հայրենիքս անդունդէ անդունդ գահալիծելու կետը հասած է: Ի՞նչպէս չը տրտմիմ ու չը ցաւիմ: Գատեցէք ուրեմն էս ես կը հնազանդիմ Ձեր տուած իրաւանցը:

(Կայսրը կը մտածէ ու չը պատասխանէր:)

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ես ճարտարախօսութիւն չ'ունիմ, բնական հանճար ամենեւին: հապա սրտես էլիւ խօսքերն են որ անկեղծութեամբ կը խօսիմ: Ձեր ազնիւ սիրտը գրաւելու ու շարժելու համար. չէմ կրնար պերճ ու զարդարուն խօսքերով ատենաբանութիւններ ընել. բայց միայն Ձեր Վեհափառութեան ազնիւ աչքերուն առջեւ կը ներկայացենեմ Հայաստանի շինուածոց ու պալատներուն տխուր ակերակները. դարձուցէք մեկ անգամ Ձեր քաղցր ու բարեգութիւն հայեցուածքը հոգեվարք Հայաստանի վրայ, որուն մընույրտը կարմրեանց արեան գոյն առած է. ասոնք Ձեզ կը ներկայացնեմ, այս կերպիւ կը խօսիմ, որ ի՞նչ ջախագանցութեամբ է էս ոչ բնական հանճարով:

Պարսիկք իրենց անգութ սուրերով ամեն տեղ կ'արեն ու անապատ կը դարձնեն: Վանքերը ու յիւրեմքը հիմնայատակ ըրած են, ու մեջի եղած

բոյոր արարողութեան յունարեն գրքերը , Մերու-
ժանայ անօրէն ձեռքով այրած . կրօնքը մեծ
վտանգի մէջ է , ո՛ր Մեծափառ Տէր , հրապաշտից ու
արեւապաշտից մեհեանները օրէ օր կը շատնան .
անքիւ անձեր Քրիստոնէութեան համար զոհ
կ'ըլլան . Եւ Հայաստանի մէջ մէկը չկայ որ այս
ամենուն դարման տանի , ո՛չ քագաւոր , ո՛չ նա-
խարար է . ո՛չ ժողովուրդ , ամեն մէկը մեկմեկ կողմ
ցրուած են : Արշակ քագաւորը Պարսից անձնա-
տուր լըլլայով ննյուշ բերդին մէջ ինքզինքը
կ'սպաննէ : Նախարարներէն ոմանք Պարսից կողմը
կ'անցնին , ոմանք ուրիշ ամրութիւններու մէջ
կապաստանին : Ժողովուրդը անօրէն ձեռքերէ
կը զոհուի : Ո՛հ , այս ամենը մօտայուր կորձանման
մը նախագուշակութիւններն են : Կարծես թէ Հայաս-
տանի աւերակներէն զիս կը կանչեն , ինծմէ օգնու-
թիւն կը խնդրեն : Ո՛վ իմ դժբաղդ հայրենիքս է .
դնւք տառապեալ զաւակներս . ինչպէս ձեզի կրնամ
օգնել , քանի որ ես ինքնս օգնութեան կարօտ եմ :
Մի հեծեք , մի հառաչեք . Աստուած իր արարածները
երեսէ ջ'ձգեր , բայց աւելի աղէկ կ'ընէր որ զիս օգնու-
թիւն կանչէյնուդ տեղ՝ Նորին Վեհափառութեան
օգնութիւնը խնդրէք : Խնդրեցէք , եւ չ'զլանար .
աղաչեցէք եւ անոր բարեգուդ սիրտը կը զիջանի :
Նախախնամութենէն ետքը ձեր երկրորդ ապաւենը
անիկայ է , ցուցըցէք անոր ձեր կիսաբաց վերքերը ,
վերցուցէք գլուխնիդ փլատակներուն տակէն , եւ ձեր
նուաղ ու անգօր հառաչանքը ու հեծութիւնը :

ԿԱՅՄՐ.

(Ընդ միջելով). Բաւական է. բաւական է :
(Աչքերը կը գոցէ ու կ'արտասուէ : Քիչ մը ժամա-
նակ երկուքնին ալ դէմքերնին գոցած կը կենան) :

ԿԱՅՄՐ.

Ինչպէս այս թշուառութեանց դարման կրնայ
տարուիլ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Իմ' մի միայն բաղձանքս այս է. եւ ասով կրնայ
գալիք չարութեանց առջեւը առնուիլ, որ Արշակայ
որդին Պապը' Հայոց վրայ բազանոր կարգելու
շնորհք ընէք :

ԿԱՅՄՐ.

Շնտ լաւ, կատարուի բաղձանքդ : (Զանգակը
կը չալէ) :

Մանկաւիկ մը կը մտնէ :

ՄԱՆԿԼԱԻԻԿ.

Տէր իմ :

ԿԱՅՄՐ.

Շուտով Տարեւտիոս գօրավարը ինծի դրկէ :

ՄԱՆԿԼԱԻԻԿ.

Շնտ աղէկ Տէր իմ :

(Մանկաւիկը կը մեկնի) :

ԿԱՅՄՐ.

Անհոգ եղիւր Հայր սրբազան, քիչ ժամանակէն
ամեն բան կարգի կը մտնէ, եւ Ձեր տրամութիւնները

ուրախութեան կը փոխադրուին: Ճշմարիտ կ'ըսեմ
փափարբէլի է ինձ որ զՁեզ ուրախութեան վիճակի
մէջ տեսնեմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Որոնց համար միշտ պարտաւոր' եմ աղօթող
պիտի ըլլամ առ Աստուած Ձեր խաղաղ ու երջանիկ
կենաց համար :

(Տարեւորու կը մտնէ:)

ԿԱՅՍՐ.

Տարեւորիս գորավար :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Տէր իմ :

ԿԱՅՍՐ.

Անմիջական գորութիւն մը կ'ուզեմ քեզմէ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Ձեր բարձր հրամանը կատարելու պապրաստ եմ
միշտ . Վեհափնօ. Տէր:

ԿԱՅՍՐ.

Շուտ մը բաւական ուժով Արշակայ որդին Պապը
հետոյ առած' Հայաստան երթաս, ու գայն բազա-
ւորեցընես բոլոր Հայոց վրայ, անկեց վերջը Պար-
սիկները բոլորովին վանես Հայաստանի սահման-
ներէն, եւ ամեն բան կարգի դնես յաջողութեամբ :
Պիտի կրնաս ասոնք ընել :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Տէր իմ, այդ ըսածնիդ ընելու համար միմիայն
Ձեր հրամանը եւ նախախնամութեան օգնութիւնը
կը պակսի :

ԿԱՅՍՐ.

Իմ հրամանն արդէն ստացար, եւ Աստուծոյ
օգնութիւնն ալ սուրբ Հայրապետին աղօթիւքը
կընաս ստանալ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Ուրեմն ալ ուրիշ բանի հարկաւորութիւն
չ'ունիմ :

ԿԱՅՍՐ.

Սրբազանին աջը համբուրէ :

(Տարենտիոս կը հանբուրէ.)

Ս. ՆԵՐՍԵՍ.

(Ձեռքը գլխուն վրայ դնելով) Միայն Աստուծոյ
օրհնութիւնը եւ ոյժը միշտ վրայ ըլլալ եւ սկսելու
գործքիդ մէջ տէր Աստուած ինքը կարողութիւն եւ
յաջողութիւն պարգեւէ :

ԿԱՅՍՐ.

Տարենտիոս գորավար :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Տէր իմ :

ԿԱՅՍՐ

Պապը ինծի դրկէ, նոյնպէս գեղեցիկ թագ մը ուսուր մը :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Շնատ աղէկ Տէր :

(Տարնետիոս կը մեկնի.)

ԿԱՅՍՐ.

Ուրիշ խնդիրք մը ունի՞ք :

Ս. ՆԵՐՍԵՍ.

Ասկէց աւելի մեծ էս ամենահարկաւոր խնդիրք մը չ'կրնար ըլլալ Վեհափառ Տէր :

ԿԱՅՍՐ.

Գուցէ Զեզի անանկ կ'երեւայ : Բայց էս գիտիմ որ ըրածս մեծ բան մը չէ :

Ս. ՆԵՐՍԵՍ.

Ի՛նչպէս մեծ բան չէ ո՛ր բազմերախտ Տէր . որ բոլոր ազգ մը կործանմանէ ազատելու համար հոգ կը տանիք . քերէսս ասկէ մեծ բարիք մը էս երախտիք չ'կրնար ըլլալ :

ԿԱՅՍՐ.

Բարիք գործելը մարդուս պարտաւորութիւնն է : Եթէ ասիկայ ալ բարիք կրնայ սիպուիլ, իմ մեծ ուրախութիւնս այն է որ երախտիք ճանչցող ազգի մը կ'ընեմ :

(Պապ կրճտոնէ։)

Ս. ՆԵՐՍԷԱ.

Ահնաւասիկ Պապ Եկաւ։

(Պապ Կայսեր առջեւ կը խոնարհի եւ սուրբ Ներսիսի աջը կը համ բուրէ.)

ԿԱՅՍՐ.

Հայրենեացդ թշուառ վիճակին անշուշտ տէրեակ ես։

ՊԱՊ.

Այն Վեհափառ Տէր եւ սիրտս վերջին աստիճան կը ցաւի, մանաւանդ հօրս ունեցած անկարգ ընթացքին վրայ։

ԿԱՅՍՐ.

Մենք հիմա կը խորհինք այս բաներուս դարման մը տանելու գրեզ ազգիդ վրայ թագաւորեցնելով, եթէ Արշակ հօրդ ընթացքը չ'բռնելու խօսք կուտաս։

ՊԱՊ.

Վեհափառ Տէր, քանի որ թագաւոր հօրս ընթացքը Հայաստանի այսչափ աղետ պատճառեց, մանաւանդ թէ ինծի այ անհաճոյ է, ինչպէս կրնամ ասանկ աղետաբեր ճամբու մը մէջ ես այ գալել։

ԿԱՅՍՐ.

Ուրեմն խօսք կուտանս որ քու մինչեւ վերջին կետոյ հայրենեացդ բարեյաւութեան հոգ տանիս, ու Աստուծոյ եւ մարդկան հաճելի ընթացք մը բռնես։

ՊԱՊ.

Ի բոյոր սրտե, Վեհափնո՛ Տէր, մանաւանդ թէ
անհրաժեշտ պարտաւորութիւնս է :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ընդունէ իմ այ երաշխաւորութիւնս Տէր իմ :

ԿԱՅՍՐ.

Շնատ աղեկ.

(Վաղարշ կը մտնէ բազ մը ու սուր մը բռնած.)

Հնս բեր Վաղարշ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Թագը կառնէ ու Կայսեր կուտայ) :

ԿԱՅՍՐ.

(Զայն Պապայ գլուխը զնէլով) Այս բագովս գրեզ
Հայոց վրայ օրինաւոր Թագաւոր կը կարգեմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Սուրը կառնէ ու Կայսեր կուտայ) :

ԿԱՅՍՐ.

(Զայն Պապայ ձեռքը տալով) Այս սուրն այ կը-
յանձնեմ բեզի, որ կարող ըլլաս հարկը պահանջած
ժամանակ բռնութիւն բանեցնել անոնց որոնք տէրու-
թեանդ անդորրութիւնը խռովել ուզեն : — Հան-
դիսաւոր օծումը կուգեի հոս ընել . բայց գործեր-
նիդ կ'ստիպե մեկ ժամ յառաջ ճամբայ ելնել :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Հաղթութենէն վերջը ժողովուրդը նոյն հանդէսն
ալ կրնայ վայելել :

ԿԱՅՍՐ.

Շնտ բարի: Ես հիմա կերբամ ամեն բան կը կար-
գադրեմ, Հնայր սրբազան :

(Կայսրը եւ Պապ կը մեկնին.)

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Առանձին) : Բարութեանց անսպան աղբիւր,
ամենախնամ Տէր . ինչպէս սքանչելի եւ քու գործ-
քերդ : Հաստատ էի, հաստատ եմ, եւ ասկեց վերջը
աւելի հաստատ պիտի ըլլամ, որ քեզի ապահնող
մահկանացուն երբէք չ'սխալիր : Միսիթարուէ,
անգուրք մեռքերէ հարուածեալ Հայաստան, քիչ
մը վերջը կուգամ գրեզ գտնելու, բայց ինչպէս պիտի
ձմի արդեօք սիրտս, ինչ ատեն առաջին պայծա-
ռութեանդ տեղ' քու հիմակուան ողորմելի վիճակդ
կենդանի աջօք տեսնեմ : Տխուր տեսարան մը պիտի
ներկայացնես իմ աջքիս, ամենացաւալի տեսա-
րան մը.....

(Ս. Ներսէս կը մեկնի.)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Գաւան կը մտնէ.)

ԳԱԻԱՆ.

Կարծես թէ իրեն ձակատագիրն է որ բոլոր
կեանքը ցաւով ու վշտերով անցնէ : Բայց ասիկայ

ինծի գարմանք կը պատճառե. իրեն արսոր գացած ժամանակը որ ջ'ուզէցի իրմէ բաժնուիլ, ճամբան ինչ տեսակ տառապանք ու նեղութիւն չը քաշէց, բայց աղէկ կը յիշեմ որ ամենեւին չը վհատեցաւ, դիմաց վրայ տրտմութիւն չէր երեւեր, մանաւանդ թէ մխիթարական խօսքերով կը քաջալերէր զիս ամեն պատահական նեղութեանց համբերութեամբ տանելու : Տեսէք, ինչ վեհանձնական առաքինութիւն, իր վշտերը ու նեղութիւնները բանի տեղ ջ'ղներ. բայց հայրենեաց թշուառութիւններուն վրայ սրտանց կը ցաւի ու կ'ողբայ :

Տէր Աստուած, ինչ սուկալի վիճակ էր ան, ինչ ատեն նաւերնիս անհաստատ փայտի մը պէս՝ երբեմն լեռնակուտակ ամեհի այիքներուն հետ մինչեւ ամպերը կը բարձրանար, եւ երբեմն փրփրադէզ լայնատարած ովկիանոսին ամեհի անդունդներուն մէջ կը խորասուզէր :

(Կայսրը կը մտնէ.)

ԿԱՅՍՐ.

Գաւանն :

ԳԱԻԱՆ,

Տէր իմ :

ԿԱՅՍՐ.

Ո՞ր է Սրբազանը :

ԳԱԻԱՆ.

Տէր իմ, իր սենեակը կ'առանձնանայ :

ԿԱՅՄՐ.

Աղաչէ իմ կողմանէս որ բարեհաճի անգամ ծը
հոս գայ :

ԳՍԻԱՆ.

Շատ աղէկ, Տէր իմ :

(Գաւան կը մեկնի.)

ԿԱՅՄՐ.

(Առանձին.) Պէտք չէ որ զայն առանձին բողոմ.
ըստ որում տրտմութիւնը անանկ մէկ ախտմըն է,
որ առանձնութիւն կը սիրէ. Եւ մարդուս առանձին
Էղած ժամանակը աւելի ուժով վրան կը բռնանայ:

Ասանկ ազնիւ, հայրենասէր սիրտ ունեցող անձ
մը յիշանի շատ հագուագիւտ է. իր խօսքերը վեր-
ջին աստիճան ազդեցութիւն ըրին վրաս : Կարծեմ
որ անիկայ է, ծանրաքայլ կուգայ :

(Ս. Հայրապետը կը մտնէ.)

Հրամայեցէք, Հայր սրբազան, ապահով Էղիք
այ, ամէն բան կարգադրեցի, Եւ կը յուսամ որ յա-
ջող վախճան մը պիտի ունենայ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Աստուծով :

(Տարենտիոս կը մտնէ զինեալ.)

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Վեհափնօ. Տէր. ամէն բան պատրաստ է, գոր-
քերը Եւ զինուորական բոլոր գործիքները Ձեր
բարձր հրամանին կ'սպասեն :

ԿԱՅՍՐ.

Քարի : (Սրբազանին.) Ինչպէս կը հաճիր. ճամբայ էլնեն :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Շատ շնորհապարտ կ'ըլլամ երբ մեկ ժամ յառաջ մեկնելու հրաման տար մեզի :

ԿԱՅՍՐ.

Ի՛նչ, դո՛ւք ալ պիտի երթար :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Հարկը անանկ կը պահանջէ, Տէր իմ :

ԿԱՅՍՐ.

Յիրաւի դժուարին է ինձ Ձեզի պէս անձէ մը բաժնուիլ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Նոյնպէս ինձի համար ալ նոյն դժուարութիւնը կայ, ո՛ր Մեծափառ Տէր. բայց ամենահարկաւոր է իմին հոն գտնուիլս : Երբ յաղթուինք, զորն որ չեմ յուսար քանի որ Աստուած մեզի հետ է, պետք էմ անձամբ հայրենեացս թշուառութիւնը տեսնել ու երբ կարելի է դարման տանիլ : Բայց երբ յաղթենք, որուն յուսալից էմ, նոյնպէս պետք էմ անձամբ նոյն ուրախութեան մասնակից ըլլալ, եւ պետք էղածները կարգադրել :

Անփոխարինելի էն ինձի՛ մանաւանդ հայրենեացս ցուցցցած մարդասիրութիւննիդ, ո՛ր Գթառատ

իշխանդ . Հայաստան աշխարհ' որ բարձր ապա-
ռածի մը մինչէն ծայրը հասած' իրեն առջեւի
կորստեան խորափոր ու անեյանեյի անդունդին
մէջ գահավիժելու կը մօտենայ , դուք օգնութեան
ձեռք կը կարկառեք , եւ կը պաշտպանեք զայն Գիշա-
տիջ արծիւներուն կատաղութենէ : Ո՞վ անփոխա-
րինեյի երախտեացս : Ես չեմ կրնար ըստ ար-
ժանւոյն իմ խորին երախտագիտական անկեղծ
զգացմունքս յայտնել : Թ՛նդ նիւրընկայու եւ աւան-
դապահ Արարատ իրեն բարձրաբերձ գագաթներէն
ուրախութեան եւ խորին երախտագիտութեան
զեփիւռներ հնչէ : Թ՛նդ հայրենեացս տխուր աւե-
րակները արեգական ճառագայթներէն զուարթա-
նան , եւ նոր Հռովմայ ու անոր մարդասեր Ինքնա-
կային առջեւ շնորհապարտութեան ստուերներ
տարածեն : Թ՛նդ Հայաստանի բշուռառացեալ վեհա-
սերունդ ժողովուրդը' զուարթ դէմքով իբրեւ յայտնի
եւ արտաքին հաւատարմիք' իւր բարերես աչքերէն
երախտապարտութեան կաթիլներ հոսեցնէ :

ԿԱՅՄՐ .

(Փայտելով.) Թ՛նդ Հայաստան այդ երախտագի-
տութեան նշանները արժանաւոր մեկու մը յայտնէ :

Ս . ՆԵՐՍԷՍ .

Արժանի էք , Տէր իմ . Ձեր վեհափառութեան կը-
յայտնէ . յուսալով որ ընդունելու կը բարեհաճիք .
քեպէտ եւ արժանաւոր անձի մը արժանաւոր փո-

խարհնութիւն չէ : Ձիս առելի շնորհապարտ պիտի
ընեք ո՛ր բազմերախտ Տէր , երբ բանակին հետ մեկ-
տեղ երբայու հրաման տար :

ԿԱՅՍՐ.

Ուրեմն քանի որ ատանկ կ'ուզեք , Ձեր բաղձա-
նաց արգելք չեմ ըլլար : — Տարեւտինս գորավար ,
քու քաջութեանդ փորձը առած եմ , բայց իմ պար-
տաւորութիւնս է իմացընել քեզի որ խոհեմութիւնը
ձեռքէ չ'ձգես . վասն զի քաջութիւն առանց խոհե-
մութեան անընդունելի , մանաւանդ վտանգաւոր է
շատ անգամ . կը յուսամ որ զիս պարզ երես կը
հանես :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Անհնգ եղիք . Վեհափառ Տէր :

ԿԱՅՍՐ.

Բարի :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Հիմա կը մնայ տխուր պաշտօն մ'ալ կատարել ,
տխուր կ'ըսեմ , ինչու որ Ձեզի պես բարերար ու
մարդասեր Ինքնակայի մը իմ հրաժարականս պիտի
տամ :

ԿԱՅՍՐ.

Ատիկայ յիրաւի տխուր պաշտօն մըն է :

(Գաւան եւ Պապ կը մտնեն.)

ԳՍԻԱՆ.

Տէր իմ , ամեն բան պատրաստ է :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Մնաք բարեան, ո՛ր Մեծափառ Տէր: Կը խնդրեմ
յԱստուծոյ որ Հայաստանի վրայ ցոյց տուած Ձեր
մարդասիրական շնորհաց ինքը վարձահատոյց
ըլլայ: Ձեր բարեճոխ Աստուածապան բնակա-
րանը՝ ամեն վշտերէ ազատ ու հանգիստ պահէ
միշտ: Ձեր հօգոր տերութեանը մէջ, խաղաղու-
թիւնը՝ ոյժը, հարստութիւնը եւ աստուածպաշ-
տութիւնը հաստատ ու անխախտ պահէ. եւ այսպէս
բոլոր հայրենեացս կողմէն խորին երախտագիտա-
կան հաւաստիքը յայտնելով՝ կուտամ իմ հրաժա-
րականս. մնաք բարեան...

ԿԱՅՍՐ.

Երթաք բարեան, սրբազան Հայր. առանց Ձեզի
իմ պալատիս մէջ գիշերային մքութիւն պիտի տիրէ.
բայց Աստուծոյ կամքը օրհնեալ ըլլայ, նոյն ինքը
յաջող վիճակ մը պարգեւէ Ձեր պատերազմին:

ԱՄԷՆՔԸ.

Ամեն:

(Ինչ որսէն նուագարան եւ երաժշտութիւն.)

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Մէկնելու նշանն է Տէր իմ:

Ս. ՆԵՐՍԷՍ.

Մէկնինք ուրեմն. Մնաք բարեան:

ԿԱՅՍՐ.

Երթաք բարեան:

(Այն ինչ Կայսրը Սրբազանին ձեռքը կը համբուրէ.)

(Վարդապետը կը գոցուի.)

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԳ.

Հայաստանի մէջ դաշտ մը:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

Ս. ՆԵՐՍԷՍ, ՊԱՊ ԹԱԳԱՆՈՐԸ, ՏԱՐԵՆՏԻՈՍ,
ԿՈՍԿԱՆԳ, ՎԱՂԱՐՇ.

Քանի մը զինուորներով կը մտնեն.

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Կոստանդ :

ԿՈՍԿԱՆԳ.

Տէր իմ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Զօրքերուն հրաման տուր քիչ մը հանգչելու,
էս դուն թշնամեաց կողմերը լրտեսէ :

ԿՈՍԿԱՆԳ.

Շնտ աղէկ, Տէր :

(Կոստանդ կը մեկնի.)

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Եկէք Տէր իմ, էս դուք Հայր սրբազան, Եկէք այս
ժայռերուն վրայ հանգչինք, մինչէս որ Կոստանդ
թշնամեաց կողմէն մեզի տեղեկութիւն բերէ :

(Կը մտնին : Խաղ կը մտնէ.)

ԽԱԳ.

(Սրբազանին.) Տէր իմ, կատարեցի պատուեր-
նիդ : Թշնամեաց գօրքերը ամեն տեղ կ'աւրեն կը-
կողոպտեն. կարծեմ աղէկ կ'ըլլայ էք պատերազմի
պատրաստութիւն տեսնուի :

ՊԱՊ.

Պատերազմի նշանը տուէք, գօրքերը պատրաս-
տուին :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Համբերութիւն ունեցէք, Տէր իմ, կ'աղաչեմ
սպասեցէք քիչ մը մինչէս որ Կոստանդ գայ : Ան-
խոնեմ յարձակում մը՝ ձեռք եղած յաղթութիւնը
կը կորսունցընէ :

(Կոստանդ կը մտնէ.)

ԿՈՍԿՍԱՆԴ.

Տէր իմ, թշնամեաց բանակը դիտեցի, ճիշդ այս
բլուրին ստորտը կը գտնուին : Մերուժանին շարժ-
մունքներէն կ'երեւայ թէ փախչիլ կ'ուզէ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Հրաման տուր պատերազմի փողը հնչելու, ես
ալ անմիջապէս կուգամ ամեն բան կը կարգադրեմ :

(Կոստանդ կը մեկնի.)

ՊԱՊ.

Վնդարչ :

ՊԱՂԱՐՇ.

Տէր իմ :

ՊԱՊ.

Սմբատ Բագրատունի ասպետին գուրցե որ իր
բանակովը իմ աջ կողմս միշտ գտնուի :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Ի՞նչ կ'ըսեք, Տէր իմ, անկարելի է որ բանակին
մեջ մտնեք :

ՊԱՊ.

Եւ ինչո՞ւ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Ձեր կենաց ապահովութեան համար :

ՊԱՊ.

Միթէ նախատինք է ինձի, ինչ ատեն այսկեանքս
գորն որ հայրենեացս պարտական եմ, անոր բա-
րութեանը համար զոհելու ըլլամ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Քնն լիցի :

ՊԱՊ.

Ինչո՞ւ ուրիմն գիս պատերազմի դաշտէն կ'ար-
գելեք :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Արդէն պարտերազմի դաշտն էք . Տէր իմ :

ՊԱՊ.

Բայց կ'ուզեմ բանակին մեջ գտնուիլ ու պատե-
րազմիլ: Ի՞նչ բանի համար Կայսրը գիս Հայաստանի

վրայ բազաւոր բրաւ . անոր փառքը էս հանգստութիւնը վայելելու միայն, երբէք, հապա պէտք եղած ժամանակ պատերազմի զօրաց հետ մեկտեղ . նաեւ արիւն քափել հայրենեաց համար : Ահաւասիկ յարմար ժամանակ, իմ աներկիւղ բազուկներուս ոյժը պիտի փորձեմ . Այնչափ երկջոտ մի կարծեք հայոց բազաւորը, որ մահուանէ վախնայ : Եթէ մեռնիմ՝ պիտի տեսներոր կրնկիս վրայ էս . ո՛չ փոքր վերք մը առած եմ : Աղէ ուրեմն, ժամանակ չը կորսընցնենք :

ՏԱՐԵՆՏԻՈՍ .

Վեհափնո՛ Տէր, կ'աղաչեմ վայրկեան մը սպասեցեք, մենք ամենքնիս ալ սրտով Ձեզի համար պատերազմելու եկած ենք . Եթէ պատերազմին մեջ դժբաղդաբար Ձեզի փորձանք մը պատահի, էս ինչպէս Կայսեր առջեւ ներկայանամ, ասով իմ կեանքս ալ վտանքի մեջ պիտի դնեք . ուստի կ'աղաչեմ Տէր իմ այդ դիտաւորութիւննիդ փոխեցեք, պատերազմին յաջողութեանը վրայ ամենեւին կասկած մի ունենար . քիչ մը վերջը էս անձամբ Ձեր ականջին պիտի հնչեցնեմ յաղթութեան ուրախալիլ լուրը :

Ս. ՆԵՐՍԷՍ .

(Պապայ) : Ինձի անանկ կերեւայ որ արելի աղէկ է պատերազմին մեջ չը մտնելնիդ : (Տարեւտիտախն) : Բայց էս պէտք էմ բանակին մեջ գտնուիլ, որպէս զի...

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

(Ընդմիջելով.) Ո՛ր, ո՛ր, նաև այդ խնդիրքն այլ
չեմ կրնար ընդունիլ . կաղաչեմ Հայր որբագան,
գուր այս բլուրին վրայ էլէք, եւ միմիայն աղօթեցէք
մեզի համար . եւ Դուք Մեծափնն. Տեր սուրբ Հայ-
րապետին քով կենայով բարձրէն դիտեցէք :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Շատ աղէկ, ըսածիդ պէս ըլլայ :

(Դուքսն պատերազմին փողը կը հչուի, վերջէն նուագարան երգով.)

« Օն արիք հաւատով տերունեան . եւ այլն : »

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Պատերազմի նշանը կը տրուի : Օրհնութիւնիդ
սուրբ Հայր :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ամենակարօղն Աստուած ձեր բագուկները զօ-
րացնէ . եւ թշնամեաց վրայ փառասնոր յաղթութիւն
մը պարգեւէ :

ԱՄԵՆՔԸ.

Ամէն :

(Տարենտիոս. Ս. Հայրապետին ձեռքը համբուրելէն վերջը. Պապայ
առջեւ կը խոնարհի, ու աճապարելով մը կը մեկնի.)

Ս. ՆԵՐՍԷՍ.

Եկէք Տեր իմ, այս բլուրին վրայ էլլենք :

(Բլուրին վրայ կեկեն, ու Ս. Ներսէս ծնկան վրայ գալով կ'աղօթէ.)
Ո՛վ ամենաբարի Տեր, Սինա լեռան վրայէն
Իսրայէլացոց բարութեան համար Մովսիսի պա-

տուերներ կուտայիր, անհաւասիկ էս ալ իբրէս
երկրորդ Սինա յերան վրայ էլած. բայց ո՛չ իբրէս
երկրորդ Մովսէս, այլ մեղապարտ մէկը քեզ օգնու-
բեան կը կանչեմ. այն, քու օգնութիւնդ կը խնդրեմ
այնպիսի ազգի մը համար որ անհաւատից դեմ քու
սահմանաձող ամենատուրք հաւատքը պաշտպանելու
համար կը պատերազմի: Վանճ քշնամիները, զորա-
ցնւոր մեր բանակը, որ ամեն բան կարող էս ընել, էս
քեզի ապաւինողը երեսէ չէս ձգեր բնաւ:

ՊԱՊ.

(Որ պատերազմին վիճակը տեսնելով շարժմունք-
ներ կ'ընէր:) Նայեցէք, Հայր սուրբ, Մերութան կը
փախչի... Ձիեն վար ինկա... Բանակեն դուրս
կելլէ... Նայեցէք Սմբատը, քաջ Սմբատը որ արա-
զընթաց նժույզի մը պէս ետեւէն կը վազէ. կը հալածէ...
Աներեւոյթ եղան:

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ի՛նչպէս Պարսիկները շուարեալ փախչիլ կուգեն
ու չէն կրնար:

ՊԱՊ.

Ամեն տեղաց շարդ կուտենկոր:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Բլուրին միւս կողմէն Սմբատ կը մտնէ, Մերութանի քեները կապած
ու մագերէն քաշելով, ձեռքն ալ երկաթէ շամփուր մը.)

ՍՄԲԱՏ.

Հիմայ գրեզ բազաւոր պիտի պսակեմ, որովհե-
տեւ Հայոց վրայ բազաւոր ըլլալ կուգեիր:

ՄԵՐՈՒԺԱՆ :

Կաղաչեմ զիս արձկե, խօսք կուտամ որ ասկեց
վերջը ճշմարիտ Հայ կըլլամ, Եւ շատ բնծաներ
կուտամ քեզի :

ՍՄԲԱՏ.

Հն, հն, հն, Ձեա ուզեր քազաւոր ըլլայ. Ինչ
անմիտ մարդ. յիշե Բագրատունի եմ ես, Եւ քազաւոր
պսակելու իշխանութիւն ունիմ :

ՊԱՊ.

(Բլուրին վրայէն :) Վնդարշ :

ՎԱՂԱՐՇ.

Տէր իմ: (Որ ետեւը կայնած բանակը կը դիտէր.)

ՊԱՊ.

Մօտեն ձայն մը կը լսեմ, նայե ինչ է :

(Վաղարշ բլուրեն վար կիջնայ.)

ՍՄԲԱՏ.

Վաղարշ, հնս եկուր. կը ճանչնաս այս մարդը :

ՎԱՂԱՐՇ.

Այն, անօրէն Մերուծանն է :

ՍՄԲԱՏ.

Ուրեմն գնա քազաւորին ասանկ ըսէ. ըսէ որ
Մերուծան բռնուվեցաւ. բայց Ս. Հայրապետը

ջ'իմանայ, որովհետեւ կը վախնամ որ կազատե՞ գայն:
Զուրցե՛ նաեւ որ հիմա այս շամփուրը տաքցնելով՝
զիմքը բազաւոր պիտի պսակեմ : Զգուշացի՛ր
Ս. Հայրապետին գուրցելէ :

ՎԱՂԱՐՇ.

Անհոգ եղիք :

(Վաղարշ դարձեալ բլուրին վրայ կելէ.)

ՄԵՐՈՒԺԱՆ.

Կաղաչեմ բնոյ տուր ինձի, ասկեց վերջը հայրե-
նեացս ջարիք մը ջեմ հասցներ :

(Բլուրին վրայ Պապ եւ Վաղարշ կը փսփսան, առաջինը գոհուբեան
շարժմունքներ կընէ.)

ՍՄԲԱՏ.

Զես ուզեր բազաւոր ըլլալ, բայց ես գրեզ պիտի
պսակեմ այս շամփուրով :

(Մագերեն քաշելով դուրս կը հանէ.)

ՊԱՊ.

(Վերէն.) Մուշեղ Մամիկանեան, պիտի վարձա-
տրուիս : — Նայեցէք Հայր. Աղուանից բանակը
բոլորովին ցրուեց : Նայեցէք. ինչպէս առաքուր
գետին կիյնան :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ահնաւասիկ Տարենտիոս զորավարը հոս կուգայ :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Տարենտիս կը մտնէ պոռալով.

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Յաղթութիւն, յաղթութիւն. փառասէր յաղթութիւն :

(Բլուրէն վար կ'իջնան.)

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Իջնալով.) Երջանիկ օր :

ՊԱՊ.

Բարեբաստիկ օր :

(Սմբատ Բագրատունի, եւ Մուշեղ Մամիկանեան կը մտնեն. առաջինը Պարսից դրօշակը բռնած, եւ երկրորդը՝ Աղուանից թագաւորին սուրը եւ սաղաւարտը.)

ՍՄԲԱՏ.

Վնր, վնր. թշնամեաց դրօշակը : (Վար ծռելով.)

(Հայոց Դրօշակակիբը կը մտնէ.)

ԴՐՕՇԱԿԱԿԻՐ.

Վէր, վէր, մինչէս Արարատայ գագաթը բարձրանայ Հայկազանց յաղթօզ դրօշակը : (Վէր վերցրնելով.)

ՍՄԲԱՏ.

Երգենք ուրիմն յաղթութեան երգը :

(Կ'երգեն երաժշտութեամբ.)

Խնդայ երկին,

Ազատ ի վեր ծածանին,

Գրօշակք փառաց
Յարին բարմ սեզ ոսխաց,
Փայլք սուսերաց
Ի ջինջ ճաճանջ արեզին
Շողան փայլին :
Խնդայ Երկին ,
Կացցէ անանց
Սյս յիշատակ պերճ փառաց ,
Ի սիրտ քաջաց
Քանդակեսցի անմոռաց,
Յորդիս Հայկայ
Եւ փառք վսեմ Հայկազանց
Խեղայ Երկին . եւայն :

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆ .

(Պապայ) Ահնաւասիկ Տէր իմ , Ուռնայր Աղուա-
նից գոռոզ թագաւորին սուրբ եւ սաղաւարտը ,
զինքը մէկ հարուածով մը բնդ տուի , ջուգէլով որ
պսակեալ գլուխ մը իմ ձեռքովս իյնայ :

ՊԱՊ .

Քաջասիրտ մարդիկս , ես ինչպէս որ ձեզմէ բոլոր
սրտանց շնորհակալ եմ այսպիսի փառաւոր յաղ-
թութիւն մը ձեռք բերելնուդ համար , նոյնպէս
ապահով եղիք , որ ես ալ այնպիսի առիթներ պիտի
տամ ձեզի , որ ինձմէ շնորհակալ ըլլաք :

Տարեւտինս զօրավար , դուն որ աւելի քան ձեռ-
քովք վաստրկեցար յաղթութիւնը , ջեմ մոռնար իմ
սրտանց շնորհակալութիւնս եւ երախտագիտու-
թիւնս գործքով ալ յայտնելու , քէ քեզ եւ քէ Վեհա-

փառ. Ինքնակալիդ: Հիմա ամեն բանէն յառաջ հան-
գըստանալու. հարկաւորութիւն ունինք, մեկնինք այս
պատերազմի դաշտէն ու ամեն բան կարգադրենք :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Այն մեկնինք այս փառաւոր դաշտէս, ուր տեղ
այսօրուան փառաց ու յաղթութեան յիշատակը
յաւիտեանս անմոռանալի պիտի մնայ ,

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Կոստանդ :

ԿՍՍԳԱՆԳ.

Տէր իմ :

ՏԱՐԵՆՏԻՈՍ.

Պատուիրէ, մեկենելու փողերը ջալուին :

ԿՈՍԳԱՆԳ.

Շատ աղէկ Տէր :

(Կոստանդ կը մեկնի:)

ՊԱՊ.

Վանդարչ :

ՎԱՎԱՐՇ.

Տէր իմ :

ՊԱՊ.

Զուրցէ՛ որ մեկ գունդ զօրք կենայ մեռեալները
բաղելու համար, թեպէտէ շատ քիչ են :

Վ.Ա.ՂԱՐՇ .

Շնտ աղէկ Տէր :

(Վ.աղարշ կը մեկնի.)

Ս. ՆԵՐՍԷՍ .

Մտիկ ընենք . Երաժշտութիւնը սկսաւ :

(Իուրսէն Երաժշտութիւն : Գաղբելէն վերջը Կոստանդ կը մտնէ.)

ԿՈՍԿՈՍՆԳ .

Տէր իմ , գօրքերը պատրաս էն Է . Ձեր հրամանին կապասէն :

ՏԱՐԵՆՏԻՈՍ :

(Պատասխ.) Հրաման տանք Տէր իմ ճամբայ Ելլելու :

Ս. ՆԵՐՍԷՍ .

Քիչ մ'այջէք սպասէր որ մեր շնորհակալութիւնը աղօթքով մը սո՛ւ . Աստուած մատուցանէր :

ՊԱՊ .

Շնտ բարի :

ՏԱՐԵՆՏԻՈՍ .

Վսեմ խորհուրդ :

(Ծնկած վրայ կուգան կարգաւ եւ Ս. Հայրապետը քիչ մը յատաջ.)

Ս. ՆԵՐՍԷՍ .

Ո՛վ բարեգութ Տէր . այս պատերազմին փառանոր դաշտին վրայ որ քու որինացդ դէմ Էդոդ անհաւատից գունդը ամօթապարտ վանեցիր , կը խնդրէնք միաբերան որ այս մեր գոհութեան

աղօթքը քու ամենայուր ականջը հասնի, կը խընդ-
րենք միաբերան, որ մեր ի խոնարհ սրտից նուխ-
րած շնորհակալութիւնները քու սքանչելի մարդա-
սիրութեամբդ ընդունիս :

Ընդունէ՛ հոյ ամենաբարի Տեր. ընդունէ՛ նաեւ
այն հոգիները, որոնք այս փառասուր պատերազմին
մէջ Քրիստոնեական սուրբ հաւատքը պաշտպա-
նելու համար նահատակուեցան : Ընդունէ՛ զանոնք
քու յուսանեմ խորանիդ մէջ, որոնք զքեզ գտնելու
յուսով իրենց կեանքերնին զոհեցին :

Պարգեւէ՛ քու երկնածիր շնորհքդ Հայաստանի
նորընտիր քաղաքին վրայ : Շնորհէ՛ անոր ոգի
Աստուածպաշտութեան, ոգի զգաստութեան, ոգի
բարեկարգութեան եւ սիրոյ :

Պահէ՛ զՀայաստան քու ամենակալ աջոյդ պաշտ-
պանութեամբ ամեն կրօնախախտ աղետալի յար-
ձակումներէ, վշտերէ ու նեղութիւններէ, որ քու
ամենօրհնեալ անունդ յաւիտեանս եւ միշտ փա-
ռասուրոյի :

(Ոտքի վրայ ելլելով.)

Ելէք քաջասիրտ ոգիներ, էլէք երթանք Հայաս-
տանի խաղաղութիւնը, փառքը եւ բարեկարկու-
թիւնը վերստին հաստատելու : Տուէք մեր հրաժա-
րականը այս փառասուր տեղոյս, որ ձեր ըրած
պերճ յաղթութեան անմահ յիշատակը պիտի ըլլայ :
Տանք մեր հրաժարականը եւ մեկնինք յաղթա-
նակաւ :

(Կը մեկնին.)

(Վարագոյրը կը գոցուի.)

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՈՐԳ.

Տեսարանը Պապայ պալատին մեջ :

ՏԵՍՍՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՍՄԲԱՏ, ՎԱՂԱՐՇ, ՊԱՊ ԵՒ ՆԵՐՍԷՍ .

Սմբատ կը մտնէ :

ՍՄԲԱՏ.

Ափսճս . ասոնք տերութեան կործանուելուն նախագուշակութիւններն են . կամաց կամաց բարեկարգութիւնը ձեռքէ կը ձգէ, գեղխութիւնը եւ անկարգութիւնը իրեն օրական գուարձութիւններն եղած են : Այս քանի՛ անգամ ե որ սուրբ Հայրապետը գայն կը յանդիմանէ ու կը խրատէ . Բայց ի գուր . այն ազգու խրատները անոր վրայ ազդեցութիւն մը չեն կրնար կոր ընել : Ճիշդ քիչ մը վերջը Արշակայ ընթացքը պիտի լռենեայ : Երանի՛ թէ անոր հետեւութիւնները չը տիրէին դարձեալ Հայաստանի մեջ : (Վաղարշ կը մտնէ :) Թագաւոր տերերնիս ո՞ր ե , Վաղարշ :

ՎԱՂԱՐՇ.

Հիմա այս սենեակը պիտի գայ Տէր իմ :

ՍՄԲԱՏ.

Բարի :

ՎԱՂԱՐՇ.

Պատուեր մը ունիք :

ՍՄՐՍ.

Զէ, ամենեւին : Կրնաք երթալ : (Վազարշ մեկալ
կողմէն կը մեկնի :) Ուրեմն մեկնիմ հոստեղեն, ջէն
ուզեր երեսը տեսնել, բայց ջէ քէ Արշակ իր հայրը
իմ սերունդս բոլորովին ջնջելուն համար իր որդւոյն
դէմ ատելութեան ոգի ունիմ. բնան. Էս հայրենիքս իմ
անձեա աւելի շատ կը սիրեմ, Էս անոր բարութեանը
համար պատրաստ եմ միշտ արիւնս անգամ բախել,
Էքէ հարկ ըլլայ. բայց սիրտս ջը դիմանար, Էս
հարկաւ զեղիս բագաւորի մը երեսը տեսնելով՝ մեկ
բանի յանդիմանական խօսքեր պիտի զրուցեմ,
որուն հետեւութիւնը յայտնի է որ շատ զեշ կրնայ
ըլլալ : Երթա՛մ առանձին ողբամ, Էս սուրբ Հայրա-
պետին աղաջեմ որ ամգամ մ'ալ գայն խրատե,
թեպետեւ իրեն խօսքերը մի Էս նոյն ազդեցութիւնը
պիտի ընեն անոր վրայ : Տայտնի կը տեսնեմ որ
թշուառութեանց ուս. արհեստից բանձր ուս. մուք ամպը
Հայաստանի մթնոլորտին վրայ դարձեալ ծան-
րանայու կը մօտենայ :

(Կը մեկնի :)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Պապ կը մտնէ :

ՊԱՊ.

Ի՞նչ ըսել ըլլայ, միթէ Էս այս բագաւորական

բազը ու գաւազանը ուրիշէ յանդիմանութիւն յետոյ համար կը կրեմ :

Իմին բռնած ընթացքս Ներսիսի հաճոյ ջ'բութիւր միթէ ես անկեց կախում մը ունիմ , ո՞վ որուն իշխանութեան տակն է . Պսայ Ներսիսի , եթէ ո՛չ Ներսես Պապայ . եւ ինչո՞ւ զիս յանդիմանելու պիտի յանդգնի : Քանի որ այս երկրիս օրինաւոր բազաւորն էմ , իմ ըրածներուս դիմահար մեկը պետք է՞ գտնուիլ . բայց ինչպէս բազաւոր , որ բազաւորական իշխանութիւն ջ'ունիմ եւ ինծմէ վար աս տիճանի մեջ եղող մեկէ մը կը յանդիմանուիմ :

(Վաղարշ կը մտնէ.)

ՎԱՂԱՐՇ .

Տէր իմ , Ս . Հայրապետը քիչ մը ժամանակ Ձեր ունկնդրութիւնը կը խնդրէ :

ՊԱՊ .

(Քիչ մը ժամանակ մտածելէն վերջը .) Զրուցէ՛ որ քնացեր է : (Վաղարշ կ'սկսի երթալ :))

ՊԱՊ .

Վաղարշ եկուր , մի գրուցեր անանկ , ըսէ որ կրնայ գալ :

ՎԱՂԱՐՇ .

Շատ աղէկ Տէր :

ՊԱՊ .

(Առանձին .) Եթէ դարձեալ յանդիմանելու ըլլայ , պիտի ստիպուիմ ուրիշ կերպ վարուիլ հետը . աւետներ :

(Ս . Հայրապետը կը մտնէ.)

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ողջոյն Թագաւոր Տէր .

(Պապ չը լսելու կը գարնէ.)

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Վայրկէան մը կը կայնի առանց խօսելու.) Ողջոյն
Թագաւոր Տէր :

ՊԱՊ.

(Դառնալով առանց տեղէն ելլելու.) Քիչ մը
յառաջ քու քագաւորդ կը յանդիմանէիր եւ հիմա
կ'ողջունէս :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Գիտցած եղիր, ո՛վ Պապ, որ մի եւ նոյն խօսքերը
պիտի շարունակեմ, միշտ, եւ գուցէ առեւի գեղ
կերպիւ, թէ որ քու անկարգ ընթացքըդ չ'ուղղես :

ՊԱՊ.

(Ծաղրելով մը). Դուն ալ գիտցած ըլլաս ո՛վ
Ներսէս, որ քու շարունակելիք յանդիմանութիւն-
ներդ մի եւ նոյն ականջներովս պիտի լսեմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ուրեմն պիտի չը կրնան ազդեցութիւն մը ընել
քու վրայ :

ՊԱՊ.

Դուցէ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ի՞նչ ըսել կ'ուզէք .

ՊԱՊ.

Գուցե :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Այսինքն, գուցե չենք ընէր. բայց ես Աստուծմէ
կը խնդրեմ որ ընեն :

ՊԱՊ.

Ես ալ կրնամ խնդրել :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Բայց եթէ վարմունքդ չը փոխես, իմ խնդրելիքս
տարբեր է, եւ ցաւով պիտի ստիպուիմ խնդրել :

ՊԱՊ.

(Ոտքի վրայ ելլելով). Մտածէք ըսածիդ վրայ .
Ներսէս, կը գոչացնեմ : Գիտես որ ձեռքես ամեն բան
կուգայ. մի գրգռէր իմ բարկութիւնս :

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Աւելի մտտենալով). Քու բոլոր ձեռքեղ եկամե-
րովը ինձի վնաս մը չէս կրնար պատճառել :

ՊԱՊ.

Բայց..... (Ձեռքը սուրին երախակալին վրայ
գնելով :))

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ահնանասիկ ատոր պատասխանը : (Ձեռքը սրտին
վրայ գնելով.) Ապերնիստ, կը հասկնամ քու
չարագործ միտքդ : Հայրենեացս բշուարուրեանց

վրայ Թեոդոս Կայսեր առջէն յորդ արտասուք
թափեցի, որպէս զի գրեզ բագաւորեցնէ : Ի՞նչ ,
Հայաստանի աղետները պիտի նորոգես քու
անկարգ, գեղխ ու անպիտան իշխանութեամբդ :
Հայոց ժողովուրդը սի դեռ իր քաշած տառա-
պանքները ու վշտերը չէ մոռցած, վերստին
բշուառութեանց մէջ պիտի ձգես զայն : Միտրդ բեր
Արշակը , Արշակ քու անագորոյն ու անխիղճ հնչ-
րըզ յիշէ . որ թեպէտ իր գործած պակասութիւն-
ները ժամանակին չէր իմանար, բայց վերջէն
Անյուշ բերդին մէջ հասկընալով որ ամէն բշուառու-
թեանց պատճառը ինքն էր եղած իր անկարգ
կառավարութեամբը, յուսահատութենէն ինքզինքը
բանտին մէջ սպաննեց :

Ուղղէ կըսեմ քու ընթացքդ . Աստուած որ գրեզ
ատ պաշտօնին յատկացուց, քեզմէ հաշիւը պիտի
փնտրուէ . այս քու իշխանութեանդ տակ եղող
ժողովրդոց կառավարութիւնը քեզմէ պիտի պա-
հանջէ . մտածէ ասոնք . պիտի ներկայանաս դուն
այ այն ահաւոր դատաւորին առջէն , որ ամէն
բանի կարգադրողն է : Ինչի՞դ կը վստահիսկոր,
վաղանցուկ փառանցդ, անցաւոր զօրութեանդ,
դիրերդձական մարմնո՞յդ . ասոնք ամենն այ պիտի
բաժնուին քեզմէ . ամէն բանի վերջը մերկութիւն է :

Բայց քեզի հետ անբաժանելի կերպիւ պիտի մի-
անան , գործած բարութիւններդ կամ չարութիւն-
ներդ . մտածէ ասոնք . էս քու անձիդ էս հոգւոյդ
մանաւանդ հայրենեացդ բշուառութիւն մի պատ-

ձառեր : Պիտի փոխէս քու ընթացքդ, գրուցէ,
պիտի ուղղէս :

(Պապ չը խօսիր :)

Ս. ՆԵՐՍԷՍ.

Պատասխան մը չէս տար :

ՊԱՊ.

(Երեսը չը նայելով.) Գեշ չէ այս ընթացքս :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Աղէկ կերեւայ քեզի այդ ընթացքդ : Հարիւրաւոր
անձեր բանտերու ու բերդերու մէջ ծանր շղթայներու
տակ յանիրաւի կը հեծեն ու կը հառաւջեն. անմեղ
արիւններ օրէ օր երկիրս կը ծըծէ. անկարգութիւնը,
գեղխութիւնը կը թագաւորէ պալատիդ մէջ, եւ չէ
րէ դուն : Փոխէ ուրեմն այդ քեզի աղէկ երեւցած
ընթացքդ որ չը գոջաս :

ՊԱՊ.

(Բարկուծեամբ մը երեսը նայելով.) Ինչո՞ւ պիտի
գոջամ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ուրեմն քրածներուդ վրայ գոջա :

ՊԱՊ.

Գեշ բան մը քրած չէմ որ գոջամ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Քանի որ ատանկ յամառ ես ու պիտի ըլլաս,
ես այ իմ ունեցած իշխանութեամբս կը գրկեմ գրեզ

Եկեղեցական յարաբերութենէ, եւ ասկեց վերջը
կարող չ'ըլլան Եկեղեցի մտնել :

ՊԱՊ.

(*Կամայ մը գեմբը ծռելով.*) Ա՛ն :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Այն , անկարգ իշխանի մը համար արդար եւ
իրաւացի պատիժ մըն է ասիկայ :

(*Բարկութեամբ կը մեկնի :*)

ՊԱՊ.

(*Առանձին.*) Եկեղեցական յարաբերութենէ
զրկուած... (*Յանկարծ ոտքի վրայ ելլելով.*) Եւ
ինչո՞ւ համար . ո՞վ է այս անձը որ կը համարձակի
ինձի դէմ այսչափ խստութիւն բանեցնել, Ներ-
սէս է... Խ՞նչ, յորմէ ստացաւ այսչափ համարձա-
կութիւն. որո՞ւ վստահանալով իմ գործքերս կը յան-
դիմանե... Բայց Գիտնայ պէտք է որ Պապ շատ
հնարքներ գիտէ մարդս մեկ վայրկեանի մեջ յերկիր
կործանելու : Գիտնայ պէտք է որ քաղաւորի մը դէմ
խօսիլը իրեն շատ սուղի կրնայ նստիլ... :

Եւ ինչո՞ւ կը բողոքում որ տակաւին այս մարդը
ապրի, որպէս զի ամեն մեկ գործքիս մեջ ինձի
խափանարմբ ըլլայ : Բառական է ալ որչափ որ
ապրեցաւ, հերկք է որ զիս օրէ օր բարկացնէ : Տամ
անոր մահուան վճիռը, պատուիրեմ որ խնոյն
գլխատեն գայն :

(*Շուտով գրասեղանին կը մօտենայ որ զանգակը զարնէ . յան-
կարծ կը կայնի .*)

Բայց ջէ, պէտք ջէ ասանկ անխոհեմութեամբ
գործ տեսնել : Հայաստանի մէջ անքիւ պաշտպան
ունի, որոնք անոր անակընկալ մահը տեսնելով
կը գրգռուին, եւ գուցէ իմ անդորրութեանս վնաս
մը կը հասցնեն : Ուրեմն խարդախութեամբ զայն
հոս հրաւիրեմ, ու այս պայտօսի մէջ վերջացընեմ
իբ կեանքը :

(Գրասեղանին վրայ խօսելով կը գրէ.)

« Արբազան Հայր .

« Յիրաւի Ձեր իրաւացի գանգատը վրաս շատ
« ազդեցութիւն ըրաւ, եւ եք ուրիշ անգամ ալ
« զանոնք կըլիշեմ, Ձեր խրատները արհամարհած
« ունիմ. այս նամակաւս Ձեր ներողութիւնը խըն-
« դրելու կը փութամ, նաեւ կ'ապահովցնեմ զՁեզ,
« որ ասկէց վերջը պիտի աշխատիմ Ձեզի հաճելի
« ընթացք մը բռնելու :

« Ձիս աւելի գոհ կ'ընեք եք բարեհաճիք զալ
« անմիջապէս մեկտեղ ձաշելու, եւ ան ատեն
« աւելի երկար միջոց կ'ունենամ խօսելու եւ սրտիս
« զգացմունքը յայտնելու, փափաքելով Ձեր ազնիւ
« տեսութեան, մնամ..... »

.....

Թող սովրի բագաւորի մը դեմ խօսիլը . հիմա այս
նամակս առնելուն պէս իսկոյն պիտի աճապարկ
զայ : (Գրասեղանին մէջէն փոքրիկ շիշ մը կը հանէ
ու գրպանը կը դնէ : Չանգահը կը չարէ :))

Նկոնր Ներսէս, եկոնր որ քու վերջին ձաշղ ընես :

(Վաղարշ կը մտնէ :)

Վ.Ա.Ղ.ԱՐՇ .

Հրաման մը ունի՞ք Տէր իմ :

ՊԱՊ .

Այն, եւ կ'ուզեմ որ շուտով կատարես :

Վ.Ա.Ղ.ԱՐՇ .

Տէր իմ, պարտաւորութիւնս է :

ՊԱՊ .

Ուրեմն այս նամակը Սրբազանին տանելով՝ առանձին իմ կողմանէս գրուցէ որ կերակուրի անպատճառ կ'սպասեմ :

(Վաղարշ կ'սկսի երբաւ.)

Կեցի՛ր . դուրսն ալ պատուիրէ՞ որ կերակուրի պատրաստութիւն տեսնեն, եւ դուք նամակը տալէդ վերջը Սրբազանին հետ մեկտեղ եկուր :

Վ.Ա.Ղ.ԱՐՇ .

Շնտ աղէկ Տէր :

(Վաղարշ կը մեկնի:)

ՊԱՊ .

(Առանձին.) Պիտի հանդարտիմ ալ անանկ ծանր լանդիմանութիւններ լսելէ: Նայցէք լանդգնութեանը մինչեւ անգամ համարձակեցաւ զիս ասկեց վերջը եկեղեցի երբալէ արգիլելու... Ան ինձմով պիտի կառավարուի քէ ես անով. Բայց տեսնենք... (Վրան նայելով.) Ո՞ր դրի ես քոյնը... այն հոս է. (Գրպանէն փոքրիկ շիշ մը կը հանէ.) Ներսէս,

այդչափ ապահով է. հզօր կը կարծես ինքզինքդ,
մինչէս անգամ քագաւոր մը արհամարհելու. բայց
էս քեզի կ'ըսեմ որ կը սղայիս. մէկ փոքրիկ կաթիլ
մը անգամ բաւական է գրեզ կործանելու :

Տնօր քու վերջին հրածարականդ քու ամենա-
սիրելի բարեկամներուդ, էս անկէ վերջը եկուր
քովս մահդ առնելու : (*Քիչ մը ժամանակ առանց
խօսելու կը քայլէ*). Դուրսէն ճայն մը կը լսեմ.
կարծեմ անիկայ է որ կուգայ : (*Շիշը կը պահէ :*)

(Վ. աղարշ կը մտնէ.)

Վ. Ա. Ղ. Ա. Ր. Շ.

Տէր իմ Սրբազանը կուգակոր :

ՊԱՊ.

Շնտ բարի, զնա հոս հրաւիրէ :

(Վ. աղարշ կը մեկնի.)

Ես ալ անոր գայուն կ'սպասեմկոր :

(Ս. Ներսէս կը մտնէ. Պապ գայն կը դիմաւորէ ու ձեռքը կը համբուրէ.)

ՊԱՊ.

Բարի եկար. Հայր Սրբազան :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Նամակնիդ զիս յետին անտիճան ուրախացուց :

ՊԱՊ.

Նոյնպէս էս ալ նոյն ուրախութիւնը ունիմ :

Ներեցէք ինձի. պատուական Հայր, եթէ յանիրաւի շատ անգամ Ձեր վեհանձն սիրտը վշտացուցած ունիմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ես արդէն ներեցի. բայց Աստուած այն ժամանակը կը ներէ ինչ ատեն Ձեր ընթացքը բոլորովին ուղղէք :

ՊԱՊ.

Ապահով եղիք . խօսք կուտամ որ ասկէց վերջը Ձեզի հաճելի կեանք մը պիտի վարեմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Այն ժամանակ Աստուած այ կը ներէ :

ՊԱՊ.

Ձեր սուրբ աղօթիւքը :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Բայց ասիկայ ինձի գարմանք կը պատճառէ որ այնքան գեղյա կեանքերնիդ քանի մը ժամուան մեջ ինչպէս փոխուեցաւ :

ՊԱՊ.

Այդ բանին վրայ գարմանայ պէտք չէք, սնրք Հայր . ասիկայ Աստուծոյ մէկ սքանչելիքը կրնայ սեպուիլ, որ Ձեր վերջին խօսքերը իմ վրաս խորունկ տպաւորութիւն ըրին :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Աստուծոյ քով անկարելի բան չ'կայ :

(Վաղարշ կը մտնէ.)

ՊԱՊ.

Վաղարշ :

ՎԱՂԱՐՇ.

Տէր իմ :

ՊԱՊ.

Սեղանը պատրաստէ :

(Վաղարշ սեղանը կը դնէ.)

Ս. ՆԵՐՍԷՍ.

Գեռ կանուխ է կարծեմ :

ՊԱՊ.

Սրբազան հայր, զգացած անպստմելի ուրախութենէս ատրժակս բացուեցաւ . Ձերը ինչպէս է :

Ս. ՆԵՐՍԷՍ,

Գրեթէ Ձերիմին պէս :

ՊԱՊ.

Ինչո՞ւ գրեթէ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Որովհետեւ տակաւին կասկած ունիմ Ձեր վրայ :

ՊԱՊ.

Մի՞ կասկածիք, պատուական չէայր, խօսքիս վրայ ապահով եղիք :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ուրիշ անգամ այ ասանկ գուրցած էք :

ՊԱՊ.

Ուրեմն Երդում մը հարկաւոր է գՁեզ հաւաստելու համար :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ո՛չ բնաւ, կը հաւատամ :

ՊԱՊ.

Հրամեցէք ուրեմն կերակուրի, սեղանը պատրաստ է : (Ելլելով մէկ կողմ.) Իրաւունք ունի կասկածելու :

(Սեղան կը նստին.)

Յիրաւի այս օրուան պես ուրախութիւն երբէք զգացած չ'ունէի :

(Գնկսին ուտել.)

Ի՞նչպէս կը գտնաք կերակուրները, ախորժակնուդ համաձայն են :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Շնտ լաւ : (զառնալով) Վաղարշ :

ՎԱՂԱՐՇ.

Տէր իմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Երբաս Խաղ սարկաւազին ըսես որ անմիջապէս հոս գայ, հարկաւոր խօսք ունիմ գրուցելիք :

Վ.Ա.Ղ.Ա.ՐՇ.

Շնատ աղէկ Տէր:

(Վաղարշ կը մեկնի: Ս. Հայրապետին խօսած ժամանակը, Պապ
գաղտնապէս գաւաթին մէջ թոյն կը դնէ ու վրան գինի լեցնելով
Ս. Հայրապետին կուտայ .)

ՊԱՊ.

Քիչ մ'այ գինի կը խմէք Տէր իմ :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Թեպէտ էս սովորած չեմ բայց այս ուրախութեան
վրայ կը խմեմ :

(Կը խմէ .)

Նայեցէք Տէր իմ Ձեզի գրուցեմ. այս աշխարհիս վրայ
մի միայն մեր գործքերուն յիշատակը պիտի մնայ,
քէ բարի է քէ չար. բայց հանդերձեայ աշխարհին
մէջ անոնց վարձատրութիւնը պիտի ընդունինք,
կամ արքայութիւն է կամ դժոյք : Ի՞նչ վախճան
ունեցաւ Արշակ քու հայրդ. ինքզինքը ըրած չար
գործքերով ատելի ըրաւ քէ մարդկան է քէ
Աստուծոյ, է բանտին մէջ յուսահատութենէն
անձնասպանութեան սոսկալի մեղքն ալ գործեց :
Արշակ թագաւորը օրինակ ըլլայ քեզի չարիք
ջը գործելու. աղէկ գիտնաս որ չարն անպատիժ
ջը մնար, նոյնպէս ալ բարին առանց վարձատրու-
թեան :

(Պապ չը կրնար դիմանալ ու բաշկինակով աչքերը կը գոցէ.)

Ինչո՞ւ կույար... Ա՛հ... միտքս կասկած մը
ինկաւ. կարծեմ զիս բունաւորեցիր... Այն. բունա-
ւորեցիր... բոյն կար բաժակիդ մէջ՝ գորն ինձ
այնչափ սիրով մատուցիր... Անգո՞ւք սիրտ... Եթէ
դուն զիս մեռցընէյու. դիտաւորութիւն ունեիր, եթէ
կը փափաքէիր որ իմ կեանքս աշխարհիս վրայէն
վերցընես. ինչո՞ւ հրապարակաւ չ'մեռցուցիր . ո՞վ
զբեզ կ'արգիւէր, ո՞վ քու անգութ ձեռքերդ կը բռնէր,
անշուշտ վախ մը ունեիր որ ասանկ վատթար
սպանութիւն մը խորհեցար : Ահնաւասիկ . հասար
բաղձանացդ . ասկեց վերջը քու գործքերդ յանդի-
մանող մէկը չ'կայ . գործէ ուզածդ չարութիւնները,
վասն զի Ներսիսի բերանը քիչ մը վերջը պիտի
անշնչանայ... Ե՛ս իմ մահուանս վրայ չեմ ցաւիր.
կը ներէմ քեզի, բայց կը ցաւիմ Հայաստանի վրայ՝
որ քեզի պէս բունաւորի մը լուծին տակ պիտի
ձնշուի. կը ցաւիմ որ քու անօրէն հօրդ գործած
անգրութիւնները պիտի գերազանցես . կը ցաւիմ,
որ թշուառ. Հայաստանի փառքը վերստին պիտի
մարի : Կը ցաւիմ որ քահանայապետութեան Աթոռը
պիտի դատարկանայ ու քեզմէ առաջ գործուած
չարութիւնները նոր կերպերով պիտի գործուին :

(Պապ ձեռքը վար արնելով Սրբազանին քով ծնկան վրայ կուգայ.)

ՊԱՊ.

Ներէ՛, ո՞ պատուական Հայր, թողութիւն տուր
զբեզ սպանողիին :

Ս. ՆԵՐՍԷՍ.

Ես արդէն ներեցի . Աստուած այ կը ներէ .
(Շունչը կ'սկսի նուազիլ . Ո՛վ Տէր... բողոքօրին տուր
զիս սպանողին... որ իմ առջեւ կը կենայ... Պահէ...
զՀայաստան...)

(Շունչը կարգիլուի .)

ՊԱՊ.

(Ոտքի վրայ ելլելով.) Ի՛նչպէս սոսկալի կերպիւ
կը տիրեկոր վրան մահուան դեղնութիւնը:

(Պապ կը մեկնի .)

Ս. ՆԵՐՍԷՍ.

(Նուազեալ.) Պնայ... գործքդ լըմնցուցիր... կ'եր-
բնա... Գնն. գնն... մտքի դրածդ անօրհնութիւնները
կատարե... (Կ'սկսի թուլնալ.) Խեղճ Հայաստան...
Աջբերս կը մթազնին... Մնն... կը տեսնեմ քու կերպա-
րանքդ... բայց... աւելի ուրախութիւն... քան թէ
վախ... կը պատ... ճատես... ին... ծի... (Աթոռին վրայ
կ'սկսի թուլնալ.) Ա՛հ... (Շատ նուազ.) Ընկալ...
Տէր... զոգի... իմ : (Աթոռէն վար կ'ընայ . կը-
հեծկլտայ.) Խնդ... (Շատ նուազ կը խօսի ու չ'հաս-
կցուիր.) Ան...:::

(Հոգին կ'աւանդէ.)

ՏԵՍՍՐԱՆ Գ.

Խաղ կը մտնէ:

ԽԱԳ.

(Յանկարծ դիակը տեսնելով կը սոսկայ ետ կը քա-
շուի.) Ա՛հ... Ո՛վ Աստուած : (Ձեռքը սրտին վրայ

կը զնէ.) Շնչառութիւնը դէռ նո՛ր դաղրէր է : Մե-
ռանր... մեռանր... զիս կանչէլ տուի՛ր որ քոս ան-
շունչ դիմկդ տեսնեմ (Թաշկինակով աչքե-
րը կը գոցէ, բիչմը վերջը) Ո՞ւր զմեզ կը բողոս ես
կ'երթաս, դիւցնզնդ ոգի..... ո՞ւր..... Ո՛վ տխուր
օր, չարագուշակ օր . . . Հայաստան անմխիթար
սգոյ մեջ ձգելու համար ծագեցար այսօր, Հայաս-
տանի փառքը մարելու համար առաւօտեցիր :
(Գրակիրն վրայ հայելով.) Ի՞նչ են այս բերնէն եկած
փրփուրները... Ա՛ն անօրէնն Պապ գրէզ քունա-
ւորեց... ավանս... Ինչո՞ւ քովդ ջ'գտնուեցայ, որ այս
տակալի սպանութիւնը արգիլէի... Աւանդ. վերջին
հրաժարականն է եղեր այն որ եկածդ ժամանակ
ինծիտուի՛ր վերջին ես աննորոգելի... Ո՞ւր ե այն ժպիտ
ու քաղցր հայեցուածքդ, որ խռովեալ սրտերու մեջ
ծիածան հաշտութեան կը փայլէր, ահա՛ մահուան
դեղնութիւնը կը տիրէ : Ո՞ւր են այն բարետես
ակունքդ, որոնք իբրեւ երկու պայծառ արեգա-
կունք Հայաստանի վրայ կը փայլէին, ահա՛ մահ-
ւան ճիրաններուն տակ փակուած անդոյս կը մնան :
Ո՞ւր է այն քաղցրաբան ու ատենագրաւ լեզուդ, որ
մինչեւ անգամ հզօր ինքնակալներու վրայ իր ազ-
դեցութիւնը կ'ընէր, ահա՛նասիկ անշնչացեալ բեր-
նիդ մեջ անշարժ ու անխօսուն կը փակուի... Աւանդ
անբուժելի ցաւոցս, աւանդ անդարմանելի կորուս-
տեանս... Ի՞նչպէս ջ'տոսկաց այն անգութ ձեռքը.
որ քոս մահուանդ բաժակը քեզի խմցուց : Ի՞նչպէս
ջ'սարսափեցաւ այն անողորմ սիրտը . որ քեզի

համար այս օրինակ անօրէն սպանութիւն խոր-
նեցաւ : Դուն մեռանք, դուն մեկնեցանք. Հայաստանի
փառքն ալ նետոյ առիք: Սնեգ առ, Արարատ, բու-
բարերարդ մեռան... ողբն, հեծէ, հառաչէ: Փառքդ
մարեցնաւ. պարծանքդ շիջնաւ... Գացին, անհետացան
այն երջանիկ օրերը, որ բու սուրբ պաշտպանդ իր
օրհնեալ ու Աստուածային շունչը կը շնչէր :


Ապերնխտոյ Պապ · բու մտքի դրած ջարութիւնդ
կատարեցիր . ասանկ հագուագիւտ բարերարի մը
ամենագնիւ կեննքը վերջացուցիր · բայց անոր,
պատուելի անունը յարիտեանս եւ միշտ կենդանի
է ու պիտի ըլլայ :

Վարագոյրը կը գոցուի:

ՎԵՐՋ.










ՓԱՐԻՋ . — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ .

Typographie arménienne Ernest Meyer, 3, rue de l'Abbaye, à Paris.







2013

13902

